



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

13398

342
<hr/>
2-99

1874

2-36  
ՅԱԽԵԼՈՒԱՄ  
Ի ՍԱՀՄԱՆՈԴՐՈԿԱՆ ՀՅՈՀԱՆԳՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԿԻԼԻԿԻՈՅ ՎԻՃԱԿԱՑ ՀԱՄԱՐ

ՊԱԽԵՐՈՅԵԱԼ

Ի ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔՈՒՅՈՒՆ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎ,ՈՅ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



ԿՈՍՏԱԴԻՆՈՒՊՈՅԻՐ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՔԵԼԵՆՑԻԱՆԻ

1874

342  
Հ-99

342

2-99

ՅԱԽԵԼՈՒԱԾ

Կ Ի ՍՍՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆ

ՀՐԱՀԱՆԳՆ


ԿԻԼԻԿԻՈՅ ՎԻՃԱԿԱՑ ՀԱՄԱՐ

ՎԱԽԵՐԱՑԵԱԼ

Ի ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎՐԾ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ ՄԻՒՀԵՆՑԻՍԵԱՆ

1874

2.010

7415 սի

Վահագոն

ՄԱԿԱՐԱՆ ՎԱՀԱԳՈՆԻ ԱՆԴԻ

ՊԵՏՐՈՎ ՎԱՀԱԳՈՆ

ԴԱՍԱՎԱՐ ՅԱՀԱԳՈՆ

ՎԱՀԱԳՈՆ

ՎԱՀԱԳՈՆ ՅԱՀԱԳՈՆ

ՅԱՀԱԳՈՆ ՅԱՀԱԳՈՆ

ՎԱՀԱԳՈՆ ՅԱՀԱԳՈՆ



615

39

2001

ԱՐՄԱՆԻԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱ

## Ա Զ Դ

Կիլիկիոյ մէջ դտնուած Առաջնորդական վիճակները ըստ Աղքային Սահմանադրութեան մի և նոյն յարաբերութիւնն ունին կեդրոնական վարչութեան հետ, ինչ որ ունին միւս ամենայն Առաջնորդական վիճակք. բայց կանքանի մը պարագաները, որոնց մէջ կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին միջնորդութիւնը կը հարկաւորի, ահա զանոնք նկատողութեան առնլով կեդրոնական վարչութեան կրօնական և Քաղաքական Խառն ժողովը, գաւառաց համար արդէն հրատարակեալ Սահմանադրական Հրահանդին իրույ յաւելուած, ներկայ Հրահանդը վաւերացուց, և գործադրութեան դրաւ Եւ երբ կեդրոնական վարչութիւնը վորձառութեամբ ինչ ինչ փոփոխութեան հարկ տեսնէ, պիտի վերաքննուի սոյն Հրահանդը, և գարձեալ պիտի հրատարակուի. բայց մինչև սոյն ատեն ներկայ Հրահանդը՝ Սահմանադրական Հրահանդին հետ անվիճակ պիտի գործադրուի, և թէ կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը և թէ կիլիկիոյ վիճակոց Առաջնորդք և Գաւառական Վարչութիւնք պարտաւոր են այս երկու Հրահանդաց համաձայն վարուելու:

24 Ապրիլ 1874

ՆԱԽԱԳԱՀ

ԿՊԱՏՐԻՖԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈԳ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
Կ. ՊՈՂԻ ՊԱՏՐԻՄՔԱԿԱՆ ՏԵՂԱՊՈՀ

ՆԵՐՄԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի ԴԻՄԱՑ ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

Ա. Գ. Խ. Խ. Խ. Խ.  
Մ. Վ. Վ. Վ. Վ. Վ.

Ա. Գ. Խ. Խ. Խ. Խ.  
Թ. Ա. Դ. Շ. Ե. Պ. Ա. Պ. Ա. Պ.

Ի ԴԻՄԱՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

Ա. Գ. Խ. Խ. Խ. Խ.  
Մ. Վ. Վ. Վ. Վ. Վ.

Ա. Գ. Խ. Խ. Խ. Խ.  
Մ. Մ. Բ. Ա. Ա. Ա. Ա.

ՅԱԿԻՆԱՌԱՄ

Ի ՍՍ.ՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԿԻԼԻԿԻՈՅ ՎԻՃԱԿԱՅ ՀԱՄԱՐ

1° Կիլիկիոյ առաջնորդական վիճակներէն իւրաքանչիւրը կ'ընտրէ իւր գաւառական Ծնդհանուր ժողովը լատ Սահմանադրական Հրահանդի կեդրոնական Վարչութեան, և ընտրական գործողութեանց տեղեկադիրը կը զբկէ առ կեդրոնական Վարչութիւնն, որ օրինաւորութիւնը ստուգելէն ետքը կը վաւերացնէ, և կը ծանուցանէ Կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսին, որ իւր կոնդակաւը ծանուցանէ վիճակին ժողովրդեան, և կեդրոնական Վարչութիւնն ալ իր վաւերացումը յատուկ նամակաւ կը ծանուցանէ Ս.ուաշնորդին և գաւառական ժողովին։ Այսպէս կ'ըլլայ նաև վիճակի մը կրօնական և Քաղաքական ժողովոց ընտրութեան վաւերացումը։

2° Գաւառական կրօնական ժողովը կրօնական Խընդրոց համար՝ ի հարկին նախ կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսին կը դիմէ, և ապա՝ ի հարկին կը դիմէ կեդրոնական Վարչութեան կրօնական ժողովոյ, կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսին կարծիքն ալ՝ ի միասին ծանուցանելով։

3° Կիլիկիոյ առաջնորդական վիճակի մը կրօնական ժողովը եթէ իւր վիճակին մէջ վարդապետ ձեռնադրել տալու հարկ տեսնէ, կը դիմէ ինդրադրով մը կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսին, և անոր հաւանութեամբը ձեռնադրել

կուտայ : Իսկ եթէ վիճակի մը ժողովուրդը փափաքի իւր վարդապետ առաջնորդը եպիսկոպոս ձեռնադրել տալ, նախ պիտի դիմէ կեդրոնական վարչութեան՝ որ ընծայացուին արժանաւորութիւնը տեսնելէ ետքը, եր հաւանութիւնը կուտայ :

4° Կիլիկիոյ վիճակին գաւառական մնտուկներուն ելքն են նաև Սսոյ աթոռոյն սահմանուած տուրքը, պտղի ևն զորս ըստ սովորութեան անխափան հատուցանելու պարտաւոր են : Եւ կիլիկիոյ Ս. կաթուղիկոսը նաև իրը վանահայր Սսոյ վանուց պարտաւոր է հոգ տանիլ նոյն վանուց պայծառութեանը, անոր մէջ հաստատելով գիշերօթիկ վարժարան ժառանգաւորաց՝ կիլիկիոյ վիճակէն ժողվելով յարմար տղաքներ յուսումն և 'ի կրթութիւն . և որոշեալ ժամանակներ համար տալ կեդրոնական վարչութեան, վարուելով ըստ Հրահանդի Աղդային վանօրէից, որ վաւերացեալ է կեդրոնական վարչութենէն :

5° Առաջնորդի ընտրութեան ատեն կեդրոնական վարչութիւնը Աղդին մէջ դանուած բոլոր անպաշտօն և առաջնորդական արժանիք ունեցող եկեղեցականաց ընդհանուր ցուցակը կը հաղորդէ նախ կիլիկիոյ Ս. կաթուղիկոսին, և անոր օրինաւոր գիտողութիւնը լսելէ յետոյ՝ ըստ այնմ նոյն ցուցակը կը հաղորդէ ընտրող դաւառին : Կիլիկիոյ Ս. կաթուղիկոսը կրնաց նոյն ցանկին մէջէն դաւառին համար ամենէն աւելի յարմարաւոր երեք անձինք ցուցընել գաւառական կրօնական և Քաղաքական ժողովը, բայց գաւառական Ծնդհանուր ժողովը ազատ է կեդրոնական վարչութեան ընդհանուր ցուցակին մէջէն ալ ընտրելու :

6° Առաջնորդի ընտրութեան տեղեկագիրը կուղարկի առ Ս. Պատրիարքն կ. Պոլոսյ . և կեդրոնական վարչութեան խառն ժողովը սոյն ընտրութեան օրինաւորութիւ-

նը քննելէ և սսուգելէ ետև կը հաստատէ զառաջնորդը . և Բ. Դրան իմաց կուտայ պաշտօնական հրամանագիրն ստանալու համար . և կիլիկիոյ Ս. կաթուղիկոսին ալ իմաց կուտայ որ իր կոնդակաւը վիճակին ժողովրդոյ ծանուցանէ : կեդրոնական վարչութիւնը յատուկ նամակաւ իր վաւերացումը կը ծանուցանէ Գաւառական Ընդհանուր ժողովին : Առաջնորդական Ցեղապահի ոնսկութեան մէջ ալ այս եղանակաւ պիտի վարուըվի :

7° Երբ առաջնորդի մը վրայ ամբաստանութիւն ծագի, կեդրոնական վարչութիւնը պիտի հաղորդէ նաև կիլիկիոյ Ս. կաթուղիկոսին, Առաջնորդին և ամբաստանուղաց մէջ իրաւախութիւն ընելու համար : Երբ իրաւախութիւնն անհնար լինի, և տեսուչ կամ քննիչ զրկել հարկ ըլլայ, կեդրոնական վարչութիւնը պիտի յանձնարարէ կիլիկիոյ Ս. կաթուղիկոսին որ ինք արժանաւոր անձինք զրկէ նոյն պաշտօնները կատարելու ըստ Սահմանադրական Հրահանդին, և անոնց տեղեկագրին արդիւնքը ծանուցանէ կեդրոնական վարչութեան, հանդերձ իւր դիտողութեամբը :

8° Կիլիկիոյ Ս. կաթուղիկոսը իրըև հոդեորդէտ կիլիկիոյ, իւր հոդեոր իշխանութեանը ներքեւ դանուած առաջնորդական վիճակաց վրայ հսկելու պարտաւոր է, որ իրաքանչիւր գաւառական վարչութիւն և Առաջնորդ Սահմանադրութեան և կեդրոնական վարչութենէն սահմանեալ օրինաց և հրահանդաց համաձայն վարուին, և իրենց պաշտօնն ու պարտաւորութիւնը կատարեն :

Եթէ հակառակ ընթացքի մէջ դանուող ըլլայ, իրաւունք ունի ազդարարութիւն ընել անոր և բացատրութիւն պահանջել: Երբ անուղայ մնայ, կը ծանուցանէ կեդրոնական վարչութեան, և անոր հրահանդին համեմատ կը վարուի :

Այս պարագային մէջ եթէ կեդրոնական վարչութիւնը տեսուչ զրկելու հարկ տեսնէ , ինք կեդրոնական վարչութիւնը պիտի զրկէ իւր կողմէն : Իսկ երբ աղդարարութիւնը փոխանակ կիլիկիոյ Ս . կաթողիկոսին կողմէն ըլլալու , ըստ Սահմանադրական Հրահանգի կեդրոնական վարչութիւնը հարկ տեսնէ աղդարարութիւն ընել կիլիկիոյ առաջնորդական վիճակի մը վարչութեան և առաջնորդին , և ապա տեսուչ զրկել հարկ ըլլայ , կիլիկիոյ Ս . կաթուղիկոսին կը յանձնարարէ տեսուչ մը զրկել հոն . և նոյն տեսչին տեղեկագրին հետ կիլիկիոյ Ս . կաթուղիկոսը իւր կարծիքն ալ կը հաղորդէ կեդրոնական վարչութեան , որ պարտուպատշաճ տնօրինութիւնը կընէ , և կը ծանուցանէ թէ առաջնորդական վիճակին և թէ կիլիկիոյ Ս . կաթուղիկոսին :

---



13398



Գին Զ դուրս  
Աեմականութիւն Կեդրոնական սհտուկին

2013

«Ազգային գրադարան»  
  
NL0046894

